ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ
ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ
ԴԻՍՊԱՆՍԵՐ
ՊԵՏԱԿԱՆ ՓԱԿ
ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ք.Վանաձոր, Նժդեհի 57
հեռ. /322/ 2-01-88, 2-41-63
email. lorirpnd@gmail.com

РЕСПУБЛИКА АРМЕНИЯ
ЛОРИЙСКИЙ ОБЛАСТНОЙ ПСИХОНЕВРОЛОГИЧЕСКИЙ ДИСПАНСЕР
ГОСУДАРСТВЕННОЕ ЗАКРЫТОЕ АКЦИОНЕРНОЕ ОБЩЕСТВО

РА г.Ванадзор ул.Нждеа 57
тел. /322/ 2-01-88, 2-41-63
email. lorirpnd@gmail.com

«15» 04 2022 թ.

No 01/359

<<Ղահրաման>> ՍՊԸ-ի
տնօրեն Մ.Հասանյանին

ՀԱՐԳԵԼԻ ՏԻԿԻՆ ՀԱՍԱՆՅԱՆ

<<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲԸ-ն և <<Ղահրաման>> ՍՊԸ-ի միջև 2021թ.-ի դեկտեմբերի 27-ին կնքված <<ԼՄՀՆԴ-ԳՀԱՊՁԲ-22/05-1>> ծածկագրով սննդամթերքի ձեռքբերման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակներում Ձեր կազմակերպությունը ստանձնել է պարտականություններ մատակարարել սննդամթերք համաձայն Հավելված 1-ով նախատեսված քանակի և որակի:

Սակայն Ձեր կազմակերպությունը այդ պարտականութունները կատարում է թերի՝ խախտելով պայմանագրով նախատեսված կետերը, մասնավորապես հաճախ են լինում պահանջված սննդամթերքի քանակի մատակարարման պակաս, դուրս գրված հաշիվ-ապրանքագրի և մատակարարված ապրանքատեսակի քանակի անհամապատասխանություն, ինչպես նաև հանձնման-ընդունման ակտերի բացակայություն: Տվյալ բացթողումների համար բազմիցս էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցվել և տրվել է ողջամիտ ժամկետ դրանք շտկելու: 2022թ. ապրիլի 12-ին հերթական մատակարարումն կրկին անգամ թերի կատարելու պատճառով պատվերը չի ընդունվել, որից հետո ընկերությունը ոչ մի քայլի չի դիմել այդ խնդիրը կարգավորելու նպատակով:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի <<բ>> ենթակետը՝ <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲԸ-ը 19.04.2022թ.-ին միակողմանի ամբողջությամբ լուծում է Պայմանագիրը:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> Հավելված 1-ի 33-րդ կետի 16-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Համաձայն Կարգ 33-րդ կետի 4րդ ենթակետի, ինչպես նաև Պայմանագրի 6.2 կետի, մատակարարման ժամկետների խախտման պատճառով կկիրառվի տույժ չմատակարարված սննդամթերքի գնի 0.05%-ի չափով: Միաժամանակ տեղեկացվում է, որ <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲԸ-ի կողմից որպես Պայմանագրի կատարման ապահովում և որակավորման ապահովում <<Ղահրաման>> ՍՊԸ-ի կողմից ներկայացված տուժանքի համաձայնագրերը և կից վճարման պահանջագրերը ներկայացվելու է համապատասխան բանկին՝ վճարման պահանջագրերում նշված գումարները սահմանված կարգով և ժամկետում համապատասխան հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

<<Լոռու մարզային հոգենյարդաբանական
դիսպանսեր>> ՊՓԲԸ-ի տնօրեն՝ **/Ա.Ա.Ղուլիջանյան/**